Խ. ՀԱՅԱՍՏԱՆ – ԱՐՑԱԽ

40 ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐ ԱՐՑԱԽ ԿԸ ՀԱՍՑՆԵՆ ՇԻՆԱՆԻՒԹ ԵՒ ԿԱԶՄԱԾՆԵՐ

ՍՄԿԿ Կենտկոմի եւ ՍՍՀՄ Նախարարաց Խորհրդի որոշմանը համապատասխան, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը եւ Հայկական ՍՍՀ Նախարարաց Խորհուրդը մշակել են ԼՂԻՄին օգնութիւն ցոյց տալու միջոցառումների ծրագիր, մասնաւորապէս՝ բնակելի տների, ընկերային-մշակութային եւ արդիւնաբերական կենտրոնների, աւտոճանապարհների շինարարութեան ծաւալման եւ բնակավայրերի *կաղֆիկաց*ման գործում:

Հաշուի առնելով ձմռան մօտենալը, որոշում է ընդունուել այս տարի Լեռնային Ղարաբաղում *քոթեճ*ային տիպի աւելի քան հարիւր բնակելի տուն կառուցել Սումգայիթից գաղթածների համար: Այդ խնդրի կատարման նպատակով Նոյեմբերի 7ին կազմուեց 40 ծանր բեռնատար աւտոմեքենաներից բաղկացած մի աւտոշարասիւն, որը նոյն օրը Լեռնային Ղարաբաղ հասցրեց շինարարական *տեխնիկա*, սարքաւորումներ, *մեխանիզմ*ներ, շինանիւթեր ու շինարարական *կոնստրուկցիա*ներ:

Նոյեմբերի 9ին ԼՂԻՄ ուղարկուեց նոյնպիսի բեռներով եւս մէկ մեծ աւտոշարասիւն:

«Արթիկտուֆ» միաւորման աշխատաւորական համախմբումի ժողովում միահամուռ որոշում ընդունուեց, աշխատելով երկարացուած ծրագրով եւ հանգստեան ու տօն օրերին, ապահովել լրացուցիչ արտադրանք՝ ԼՂԻՄին օրական 4–5 վագոն քար ուղարկելու համար: Նախատեսուած շինութիւնների շինարարութիւնը ժամանակին աւարտելու համար Լեռնային Ղարաբաղի համապատասխան կազմակերպութիւնները կ'ապահովուեն *ցեմենտ*ով ու *ասպոշիֆեր*ային արտադրանքով:

Նախատեսուած ծրագրի իրականացման աշխատանքը գտնւում է Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի եւ հանրապետութեան կառավարութեան մշտական հսկողութեան ներքոյ:

Արմենիրէ»